Պարունակում է մրցութային գաղտնիք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 31

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի 2008թ. հուլիսի 7-ին ժամը 16:30-ին ՀՀ Կառավարության նիստերի դահլիճում կայացած արտահերթ նիստի

Նիստը նախագահում էր.

ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Արմեն Գևորգյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Վահրամ Ներսիսյանցը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի փոխնախագահ, ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական
Տիգրան Դավթյանը	ՀՀ ֆինանսների նախարար
Ներսես Երիցյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Գուրգեն Սարգսյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Արամայիս Գրիգորյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Արայիկ Հովհաննիսյանը	«Հայաստանի ավագանիների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Վանիկ Սողոմոնյանը	«Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ-ի նախագահ
Աշոտ Ոսկանյանը	«Ագրոզարգացում» ՀԿ-ի նախագահ
Կարեն Նազարյանը	Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղանի գործադիր տնօրեն

Կառավարման խորհրդի դիտորդներ.

Կարինե Դանիելյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ, «Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ

Նիստից բացակայում էր.

Ալեքս Ռասինը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն

Նիստին հրավիրված էին.

Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Նորա Մարտիրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, Կառավարման Խորհրդի քարտուղար
Հակոբ Պետրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի գուղական ճանապարհների վերականգնման ծրագրի ղեկավար
Էդիթ Պետրոսյանը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորցայի ծրագրի օգնական
Սիմոն Ղոնաղչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Հովհաննես Սահակյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ

Նիստը բացեց «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Նիստի օրակարգում ներկայացված էին հետևյալ հարցերը.

1. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի Պայմանագիր No RRRP-CW-03/2007-ում (Լոտ 1, Լոտ 2, Լոտ 3, Լոտ 4, Լոտ 5 և Լոտ 6-ում) ընդգրկված ճանապարհահատվածների վերականգնման աշխատանքների ֆինանսավորման վերաբերյալ Հազարամյակի Մարտահրավեր Կորպորացիայի դիրքորոշման, ինչպես նաև ճանապարհաշինության Առաջին փաթեթի վերաբերյալ Լրացուցիչ Համաձայնագրի նախագծի քննարկում և հաստատում:
2. Այլ հարցեր՝

   ա/ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում

«Երրորդ կարգի ոռոգման ջրանցքների վերականգնման նախագծում և շինարարության վերահսկում», IA-07/002 խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:

բ/ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում տեխնիկական խորհրդականի տեխնիկական առաջարկի գնահատման արդյունքների և պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:

գ/ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի գնումների պլանի փոփոխության քննարկում և հաստատում:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը ներկաներին տեղեկացրեց, որ ՀՄԿ-ն հուլիսի 3-ով թվագրված նամակով հաստատել է 8-րդ հատկացման հայտը՝ նվազեցնելով պահանջված գումարը շինարարական աշխատանքների Առաջին փաթեթի իրականացման համար նախատեսված գումարի՝ 7,804,664 ԱՄՆ դոլարի չափով: Առաջին փաթեթով նախատեսված աշխատանքների իրականացման համար մինչև 2008թ. դեկտեմբերի 31-ը նախատեսվում է ծախսել մոտ 14 մլն ԱՄՆ դոլար: Ընդ որում հուլիսի 3-ով թվագրված՝ Ներսես Երիցյանին ուղղված նամակով ՀՄԿ-ն հայտնել է, որ այդ գումարը չի հաստատելու նաև հաջորդ եռամսյակում:
Սակայն վերջինս արձագանքել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի առաջարկին և համաձայնություն է տվել, որպեսզի այդ աշխատանքների մեկնարկի և առաջին վեց ամիսների համար անհրաժեշտ միջոցները տրամադրվեն ՀՀ պետական բյուջեից՝ միաժամանակ ամրագրելով այդ համաձայնության նախապայմաններ: Մասնավորապես՝ ՀՄԿ նամակի 3-րդ կետում նշվել է, որ ՀՀ կառավարության կողմից տրամադրվող միջոցները հետագայում ՀՄԿ-ի կողմից չեն փոխհատուցվի և, փաստորեն, կծախսվեն Հազարամյակի մարտահրավեր ծրագրով նախատեսված այլ ճանապարհաշինական աշխատանքների ֆինանսավորման համար: Բացի այդ ՀՄԿ-ն նախատեսել է, որ ՀՀ պետական բյուջեից տրվող միջոցները ևս պետք է ծախսվեն համաձայն ՀՄԿ ուղեցույցերի (նամակը և Լրացուցիչ Համաձայնագրի հայերեն թարգմանությունը կցվում են):

Տիգրան Դավթյանը հայտնեց, որ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման համար անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել բյուջեում, քանի որ ներկայումս ՀՀ պետական բյուջեով նախատեսված գումարներն ուղղվում են միջպետական, այլ ոչ համայնքային ճանապարհների կառուցմանն ու վերականգնմանը:

Արմեն Գևորգյանը խնդրեց պարզաբանել, թե արդյո՞ք ՀՄԿ-ն այլ գումարներ տրամադրում է և ի՞նչ ծրագրերի իրականացման համար:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ ՀՄԿ-ից գումարներ ստացվում են ոռոգման, ջրից դեպի շուկա, մոնիտորինգի և ադմինիստրատիվ ծախսերի ֆինանսավորման համար: Բացի այդ գումարներ են հատկացվում նաև ճանապարհաշինության՝ մասնավորապես Արմավիր-Իսահակյան-Գյումրի ճանապարհահատվածի վերականգնման աշխատանքների իրականացման համար: ՀՄԿ-ն չի ֆինանսավորում բացառապես Առաջին փաթեթում ընդգրկված ճանապարհների շինարարական աշխատանքները:

Վահրամ Ներսիսյանցը նշեց, որ Հազարամյակի մարտահրավեր ծրագրով նախատեսված ծրագրերը Հայաստանի Հանրապետության առաջնահերթ ծրագրերն են, որոնք անհրաժեշտ են աղքատության կրճատման և հանրապետության համաչափ զարգացման համար: Ներկայումս նախընտրելի կլինի, եթե այդ ծրագրերի մի մասը ֆինանսավորվի ՀՀ պետական բյուջե կատարվող հարկային մուտքերից: Հայաստանի Հանրապետությունն ունի նոր վարչարարություն, որն ուղղված է հարկային և մաքսային մուտքերի հավաքագրման գործընթացի կատարելագործմանն ու կայունացմանը: Անգամ եթե Հայաստանի Հանրապետության պետական միջոցները ծախսվում են ՀՄԿ ուղեցույցերի համապատասխան, ապա կարելի է նշել, որ սա նպաստավոր տենդենց է, քանի որ վերջիններս համապատասխանում են Համաշխարհային Բանկի չափանիշներին, որը մեր երկրում արդեն իսկ ամուր հիմքեր է ձեռք բերել:

Գուրգեն Սարգսյանը հայտնեց, որ Հայաստանի Հանրապետությունը ՀՄԿ-ի կողմից իրականացվող ճանապարհաշինական աշխատանքներին զուգահեռ ձեռք է բերում պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի միջոցներից այդ ճանապարհների պահպանման և նորմալ շահագործման համար անհրաժեշտ ծախսերը ֆինանսավորելու մասով:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե արդյո՞ք գնաճի դեպքում հնարավոր կլինի նվազեցնել նախատեսված աշխատանքների ծավալը:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ այդպիսի հնարավորություն պայմանագրերում նախատեսված է:

Կարինե Դանիելյանը հայտնեց, որ համարում է տվյալ ծրագրի իրականացումը շատ կարևոր և նշեց, որ անհրաժեշտ է ցույց տալ, որ Հայաստանի Հանրապետությունը պատրաստ է ֆինանսավորելու իր իսկ ծրագիրը, հատկապես որ ճանապարհաշինական ծրագրերի մասով առ այսօր որևէ բնապահպանական խնդիրներ առաջ չեն եկել:

Վանիկ Սողոմոնյանը նշեց, որ տվյալ ճանապարհները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության կենսական նշանակության ճանապարհներ, որոնք գյուղացու համար ապահովում են ելք դեպի հանրապետական նշանակության ճանապարհային ցանց: Բացի այդ տվյալ ծրագիրը համահունչ է ՀՀ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրին: Անհրաժեշտ է որպեսզի ծրագիրն իրականացվի՝ անգամ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Կարեն Նազարյանն ավելացրեց, որ տվյալ ծրագրի համար շատ կարևոր է ժամանակը, քանի որ ժամանակի ցանկացած կորուստ բերում է էական գնաճի: Եթե ՀՀ կառավարությունը ներկայումս գումար հատկացնի ծրագրի շուտափույթ մեկնարկի համար, ապա այն կդիտվի որպես ծրագրի արդյունավետ իրականացման վերաբերյալ ՀՀ կառավարության վստահության ապացույց:

Արայիկ Հովհաննիսյանը խնդրեց պարզաբանել. եթե անհրաժեշտ գումարը տրամադրվի ՀՀ պետական բյուջեի միջոցներից, ապա դա համարվումէ արդյո՞ք Հազարամյակի մարտահրավեր ծրագրի գումարի ավելացում, կհայտարարվի արդյո՞ք նոր մրցույթ, թե այդ գումարները պետք է ծախսվեն արդեն իսկ անցկացված մրցույթի համար:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ֆորմալ առումով ծրագրի գումարը չի ավելանա, սակայն այն կծախսվի ծրագրային նպատակներով, ընդ որում արդեն իսկ անցկացված մրցույթի համար:
Արա Հովսեփյանը միաժամանակ ավելացրեց, որ ՀՀ Նախագահի կողմից նմանատիպ առաջարկի հիմնական նպատակն է հանդիսացել շինարարության համար տարվա բարենպաստ ժամանակը չկորցնելու գաղափարը:

Քննարկումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** ներկայացնել Լրացուցիչ Համաձայնագրի նախագիծը ՀՀ կառավարության նիստում քննարկման, քանի որ վերջինս հանդիսանում է

բյուջետային հատկացում և հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանին ուսումնասիրել ՀՀ բյուջետային հնարավորությունները և համապատասխան գումար հատկացնել ծրագրի ֆինանսավորման համար: Միաժամանակ, հանձնարարել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին դիմել կապալառուներին երկարացնելու առաջարկների վաղեմության ժամկետը:

Օրակարգի 7-րդ հարցի ա/ կետը ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանի կողմից ներկայացվելուց հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում «Երրորդ կարգի ոռոգման ջրանցքների վերականգնման նախագծում և շինարարության վերահսկում», IA-07/002 խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի նախագիծը:

բ/ կետը ներկայացվեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանի կողմից:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը խնդրեց պարզաբանել, թե ինչ աղբյուրներից պետք է ֆինանսավորվեն տեխնիկական խորհրդականի ծառայությունները, եթե Հազարամյակի մարտահրավեր ծրագիրը դադարեցվի:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ այդ դեպքում ֆինանսավորման խնդիր չի լինի, քանի որ տվյալ պայմանագիրը ևս կդադարեցվի:

Անդրանիկ Անդրեասյանը հայտնեց, որ տվյալ խորհրդականը ապահովում է ոռոգման ոլորտում կապը ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի խորհրդատուների, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի և ՀՄԿ-ի միջև:

Ներսես Երիցյանն ավելացրեց, որ տվյալ խորհրդականը բերում է միջազգային լավագույն փորձը, ներդնում է նոր մոտեցումներ և տեխնոլոգիաներ:

ՀՀ Վարչապետը խորհրդի անդամներին հարցրեց, թե ո՞րն է ծրագրով նախատեսված 3 հիմնական ուղղություններից առավել նախապատվելին:

Տիգրան Դավթյանը նախապատվությունը տվեց ճանապարհաշինությանը, իսկ Արամայիս Գրիգորյանը հայտնեց, որ առավել նպատակահարմար է համապատասխան ֆինանսավորման առկայության պարագայում գումարը համամասնորեն հատկացնել և՛ ոռոգմանը և՛ ճանապարհաշինությանը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հայտնեց, որ կարծում է առավել նախապատվելի ուղղությունը ոռոգումն է, քանի որ վերջինս անմիջական ազդեցություն ունի գյուղացու եկամուտի ավելացման վրա:

ՀՀ Վարչապետը միաժամանակ խնդրեց պարզաբանել, թե ի՞նչ է իրենից ներկայացնում Ջրից դեպի Շուկա բաղադրիչը:

Էդիթ Պետրոսյանը պարզաբանեց, որ այս ծրագրի միջոցով ձևավորվում է որոշակի կայունություն, հնարավորություն է ընձեռնվում ուսուցումների միջոցով ցույց տալ գյուղացուն, թե ինչպես առավել արդյունավետ օգտագործել ջուրը, ինչպես անցում կատարել ավելի բարձրարժեք գյուղատնտեսական կուլտուրաների մշակմանը: Ծրագիրը հիմնականում նախատեսում է երկու ուղղություն՝ ուսուցում և վարկավորում:

Արա Հովսեփյանն ավելացրեց, որ ներկայումս անցկացվում է երկու ծրագրերով ուսուցում, օգնություն է ցուցաբերվում գյուղացիներին՝ կապված մարքեթինգային հետբերքահավաքային մոտեցումների հետ, բացի այդ տրամադրվում է զուտ ֆինանսական օժանդակություն այն

գյուղացիական տնտեսություններին, որոնք հանդես են գալիս ցուցադրական տնտեսություն կազմակերպելու պատրաստակամությամբ:

Վահրամ Ներսիսյանցը խնդրեց պարզաբանել, թե ինչու՞մ է կայանում նմանատիպ մասնագետի ներգրավվածության անհրաժեշտությունը, այն դեպքում երբ Հայաստանի Հանրապետությունում կան ոռոգման ոլորտի լուրջ մասնագետներ:

Անդրանիկ Անդրեասյանը պարզաբանեց, որ փորձառու մասնագետի ներգրավվածությունը միշտ էլ օգտակար է, բացի այդ այն խթանում է տեղական մասնագետների կարողությունների ավելացմանը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ներկայումս ոռոգման ոլորտում խնդիրներ են առաջանում կապված այն փաստի հետ, որ ՀՄԿ-ի մասնագետների և տեղական խորհրդատվական ընկերությունների մոտեցումները և մեկնաբանությունները հաճախ չեն համընկնում: Տվյալ պարագայում մնանատիպ խորհրդականը օգնում է համահարթեցնելու և մեկ ընդհանուր դաշտ բերելու կողմերի մոտեցումները:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում տեխնիկական խորհրդականի տեխնիկական առաջարկի գնահատման արդյունքները և պայմանագրի նախագիծը:

գ/ կետը ներկայացվեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանի կողմից, որից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի գնումների պլանի փոփոխությունը:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստը արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար
Ն. Մարտիրոսյան